# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱԶՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | Աստրադեզ Մաքս | ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ | Հեղուկ խտանյութ, որը պարունակում է ` 8,5% N,N-բիս(3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին, 18,0% չորրորդային ամոնիումային միացություններ (ՉԱՄ) (գումարային)և այլն: Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ազդեցությամբ գրամ-բացասական և գրամ-դրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչների՝ թեստավորված Mycobacterium terrae DSM 43227 շտամի համար, լեգիոնելոզի հարուցիչների, անաէրոբ վարակների, հատուկ վտանգավոր վարակների (ՀՎՎ)՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի հարուցիչների (սպորասպան ակտիվություն)), վիրուսասպան ազդեցությամբ (արտաընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի վիրուսների, ադենովիրուսների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպների, արտաընդերային և ընդերային հեպատիտների, Կոքսակի, ECHO և այլ վիրուսների նկատմամբ), սնկասպան հատկություններով (կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի նկատմամբ՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | թեստավորված Aspergillus niger թեստ-շտամի կուլտուրայի համար), մակաբուծասպան ակտիվությամբ (այդ թվում՝ Guardia lamblia ցիստերի, Cryptosporidium parvum oogիստերի, Ascaris lumbricoides ձվիկների, Taeniarhynchus saginatus օնկոսֆերների նկատմամբ): Միջոցը նախատեսված է ցանկացած տեսակի մակերեսների, սենքերի և սարքավորումների ախտահանման և լվացման համար ; բժշկական նշանակության արտադրատեսակների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար, էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման համար, էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման (ԲՄԱ) համար, բժշկական նշանակության արտադրատեսակների (այդ թվում վիրաբուժական գործիքների ,էնդոսկոպներին կից գործիքների) մանրէազերծման համար; օդի ախտահանման համար՝ տարբեր օբյեկտների վրա փոշեցրման եղանակով: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բազմակի օգտագործման համար 45 օրվա ընթացքում: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 10 | | | |